ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը. Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը և Լոս Անջելեսում հեռարձակվող «Վարդանանք» հեռուստատեսային զրուցահանդեսը նոյեմբերի 13–15-ը կազմակերպել էին «Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան» բնաբանով գիտաժողով: Թե՛ զեկուցումների ընդգրկած թեմատիկան և թե՛ զեկուցողների մասնագիտական լայն ընդգրկումը, գիտության զանազան բնագավառների ներկայացուցիչների մասնակցությամբ, երկու ակնհայտ իրողությունների վկայություն էր: Նախ, կուտակված խնդիրները կարոտ են լուծումների հայագիտական մեթոդաբանությամբ, և երկրորդ՝ գիտական և հասարակական լայն հնչեղություն ունեն:

Գիտաժողովի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկան Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը և Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը:

Գիտաժողովը տևեց երեք օր: Տեղի ունեցավ ինը նիստ, այլազան բնագավառների մասնագետների կողմից ներկայացվեցին 41 զեկուցում:

Գիտաժողովի բնաբանին անմիջականորեն առնչվող զեկուցումներով հանդես եկան Էմմա Խանզադյանը, Հակոբ Սիմոնյանը, Արաակ Գնունին (հնագիտության բնագավառ), Աշոտ Գրիգորյանը (ճարտարապետություն), Անի Ութուջյանը, Սարգիս Պետրոսյանը, Մուրադ Օհանյանը, Համլետ Մարտիրոսյանը, Գոհար Վարդումյանը, Սուրեն Մարտիկյանը, Վարդան Ասծատրյանը, Ռոբերտ Ղազարյանը (պատմություն, բանասիրություն և ազգագրություն), Տիգրան Մկրաչյանը, Լեսինդ Ղազարյանը (երկրաբանություն), Սամվել Շահինյանը, Վահան Տեր-Ղևոնդյանը (քարանձավագիտություն), Վաչե Պետրոսյանը (խաչքարերի մեկնաբանությամբ) և Կարեն Թոխաթյանը (ժայռապատկերներ):

Աշոտ Մելքոնյանն անդրադարձավ Գուգարաց աշխարհի Ջավախքի գավառին, որպես պատմական Հայաստանի տարածք, և այդ իրողությունը ժխտող պատմագիտական խեղաթյուրումներին:

Էդուարդ Դանիելյանը Վասիլի Թսիրյանի հետ համատեղ զեկուցումով արծարծեց հայության տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների լուծման գործում պետական հայեցակարգի մշակման կարևորությունը, քանզի որոշ հրապարակումներում հայոց պատմական ժառանգության աղավաղումները բոլոր հիմքերը տալիս են բարձրացնելու համար այդ հարցը:

Ալբերտ Մուշեղյանի զեկուցումը նվիրված էր Մովսես Խորենացու պատմական հայեցակետին, ըստ որի Մեծ Հայքի Այրարատ նահանգն ի սկզբանե եղել է Հայկի ցեղի նահապետների ժառանգության երկիրը, և որ միևնույն Արարատ անունով են կոչվել թե՛ Հայաստանի այդ նահանգը և թե՛ ամբողջ Հայաստան երկիրը:

Հայոց պատմության վաղ և միջնադարյան շրջանին առնչվող հարցերով հանդես եկան Էմմա Կոստանդյանը, Հասմիկ Մարգարյանը, Գագիկ Պողոսյանը, Երվանդ Մարգարյանը և Վրեժ Վարդանյանը:

Վարդան Հովհաննիսյանն անդրադարձավ այն իրողությանը, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբին մեծ թափ առած ռևիզիոնիզմը, այս դեպքում հայոց պատմության վերանայումը, տեսական նախերգանքն էր Հայոց Մեծ Եղեռնի գործնական կիրառման, ինչպես նաև անդրադարձավ այդ «վերանայման» թողած բացասական ազդեցությանը հայ մտքի վրա ընդհանրապես, և այլոց կողմից հայ մշակույթի յուրացման փաստին, ուստի հայրենի հայագիտության պարտքն է վերականգնել պատմական ճշմարտությունը:

Արտակ Մովսիսյանն իր զեկուցման մեջ բարձրացրեց հայ ժողովրդի կազմավորման և Հայկական լեռնաշխարհում պետականության սկզբնավորման թվագրումների, ինչպես նաև այդ առնչությամբ որոշ պատկերացումների վերանայման անհրաժեշտության հարցը:

Ալբերտ Ստեփանյանի զեկուցումը վերաբերում էր պատմության քաղաքակրթության չափմանը:

Արթուր Շահնազարյանն անդրադարձավ հայոց էթնիկական պատմության համակարգում և հայագիտության մեջ մեթոդաբանական բարեփոխումներ կատարելու, մասնավորապես «հում» և առավել ամբողջական նյութի համակարգման անհրաժեշտությանը:

Վահան Սարգսյանը և Լեյլա Ստեփանյանը անդրադարձան Հայկական լեռնաշխարհից տևական միգրացիայի էթնիկական ու մշակութային ազդեցություններին, առաջինը՝ բասկերի, և երկրորդը՝ պոլինեզացիների առնչությամբ:

Սիմոն Կամսարականը ներկայացրեց Հայրենիք երևույթի բնագիտական էության մասին իր տեսությունը:

Սիմոն Աղաջանյանը զեկուցեց Արարատյան թագավորության մի սեպագիր արձանագրության հայերեն ընթերցման փորձի մասին:

Հայոց այբուբենին և նրա համակարգին առնչվող հարցերի անդրադարձան Սամվել Գրիգորյանը, Սամվել Բեկթաշյանը, Կարլեն Ավետիսյանն ու Մովսես Նաջարյանը:

Արմեն Դավթյանն ու Սամվել Բաբայանը խոսեցին կենդանակերպի համաստեղությունների հայոց հետ առնչվող հարցերի մասին:

Գիտաժողովի արդյունքներն ամփոփեցին Աշոտ Մելքոնյանն ու Էդուարդ Դանիելյանը՝ շեշտելով գիտաժողովի շարունակականության անհրաժեշտությունը: